Հաստատում եմ

Տնօրեն՝ _____ Լ. Պետրոսյան

# ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

## II «Ա» ԴԱՍԱՐԱՆ

## Դասղեկ՝ Վ. Պողոսյան

2023-2024 ուստարի

ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄԵՐ

II «Ա» դաս. I կիսամյակ 15 ժամ

Դասղեկ՝ Վ. Պողոսյան

| Հ. | Թեմա | ժամկետը | Կատարողը |
|---|---|---|---|
| 1. | Գիտելիքի օր | I շաբաթ | Դասղեկ |
| 2. | Օրվա ռեժիմ, դպրոցական կանոնակարգ | II շաբաթ | Դասղեկ |
| 3. | Անկախության օր | III շաբաթ | Դասղեկ |
| 4. | Ճ/ե։ Փողոցներում և ճանապարհներին սովորողների վարքի հիմնական կանոնները; | IV շաբաթ | Դասղեկ |
| 5. | Իմ սիրելի ուսուցչուհի։ | V շաբաթ | Դասղեկ |
| 6. | Էքսկուրսիա քաղաքի տեսարժան վայրեր։ | VI շաբաթ | Դասղեկ |
| 7. | Ոսկե աշուն | VII շաբաթ | Դասղեկ |
| 8. | Իմ իրավունքներն ու պարտականությունները։ | VIII շաբաթ | Դասղեկ |
| 9. | Ճ/ե։ Հետիոտնի տեղաշարժը ճանապարհներով և փողոցներով։ | IX շաբաթ | Դասղեկ |
| 10. | Իմ սիրած հեքիաթը | X շաբաթ | Դասղեկ |
| 11 | Ինչպես պաշտպանվել աղետներից։ | XI շաբաթ | Դասղեկ |
| 12 | Ճ/ե։ Փողոցների և ճանապարհների տարրերը։ | XII շաբաթ | Դասղեկ |
| 13. | Բարև', ձմեռ; Միջոցառում։ | XIII շաբաթ | Դասղեկ |
| 14. | Դասասենյակի տոնական ձևավորում։ | XIV շաբաթ | Դասղեկ |
| 15 | Ուրախ Ամանոր։ Դասարանական միջոցառում։ | XV շաբաթ | Դասղեկ |

II կիսամյակ 17 շաբաթ

| Հ. | Թեման | Ժամկետը | Կատարողը |
|---|---|---|---|
| 1 | Ինչպե՞ս անցկացրի Ծննդյան տոները։ | I շաբաթ | Դասղեկ |
| 2. | Հայոց բանակ մեր հաղթական | II շաբաթ | Դասղեկ |
| 3. | Ճ/ե։ Լուսացույցի և կարգավորողի ազդանշանները։ | III շաբաթ | Դասղեկ |
| 4. | Նվիրենք միմյանց գրքեր։ | IV շաբաթ | Դասղեկ |
| 5. | Անաղարտ պահենք մայրենին։ Միջոցառում; | V շաբաթ | Դասղեկ |
| 6 | Դռները բացե'ք, գարուն է գալիս | VI շաբաթ | Դասղեկ |
| 7. | Մայրության և գեղեցկության տոն | VII շաբաթ | Դասղեկ |
| 8. | Ճ/ե։ Խաչմերուկները և դրանց տեսակները։ | VIII շաբաթ | Դասղեկ |
| 9. | Սուրբ Հարության տոն | IX շաբաթ | Դասղեկ |
| 10. | Ճ/ե։ Ճանապարհային նշաններ։ | X շաբաթ | Դասղեկ |
| 11. | Ով աշխատի, նա կուտի | XI շաբաթ | Դասղեկ |
| 12 | Մեծ Եղեռն։ | XII շաբաթ | Դասղեկ |
| 13. | Լինենք հանդուրժող | XIII շաբաթ | Դասղեկ |
| 14. | Աշխատանքը մայրն է ամեն բարիքի։ | XIV շաբաթ | Դասղեկ |
| 15. | Ճ/ե։ Ուղևորների պարտականությունները։ | XV շաբաթ | Դասղեկ |
| 16. | Ծաղկահանդես։ Դասարանական միջոցառում։ | XVI շաբաթ | Դասղեկ |
| 17 | Ճ/ե։ Տրանսպորտային միջոցներց իջնելիս փողոցն անցնելու կանոնները։ | XVII շաբաթ | Դասղեկ |

## Կրթադաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

### Գեղագիտական դաստիարակություն

Գեղեցիկի հետ առնչվելու և հոգևոր կուլտուրայով զբաղվելու իրավունքը դաստիարակության կարևորագույն տարրերից մեկն է: Գեղագիտական դաստիարակությունը սովորողների և մանկավարժների համատեղ գործունեության գործընթաց է դպրոցականների էսթետիկական կուլտուրան ձևավորելու ուղղությամբ: Գեղագիտական կուլտուրան իր մեջ ներառում է զգացմունքների, գիտակցության, վարքագծի և գործունեության որոշակի աստիճան: Արվեստի մեջ այն կապված է արվեստի ստեղծագործական և կյանքի երևույթների էսթետիկական ընկալման հետ: Գեղագիտական դաստիարակություն նշանակում է անցյալի կուլտուրական ժառանգականության տիրապետում և ճիշտ վերաբերմունք դեպի ժամանակակից արվեստը:

Գեղագիտական դաստիարակությունը ներկայացնում է մանկավարժական գործունեության համակարգ: Գեղագիտական դաստիարակության համակարգը ընդգրկում է սովորողի ուսումնական գործունեությունը, արտադասարանային և արտադպրոցական աշխատանքները, գեղագիտական դաստիարակությունն ընտանիքում, ինքնադաստիարակությունը: Գեղագիտական դաստիարակության մեթոդներն են՝ բացատրություն, արվեստի ստեղծագործական վերլուծություն, դրական փորձը, քաջալերանքը և վարժությունը արվեստում: ***Գեղագիտական դաստիարակության ձևերն են՝ զրույց, դասախոսություն, պոեզիայի երեկո, վիճաբանություն, հանդիպումներ:*** Դպրոցականների գեղագիտական զգացողություններն առաջ են բերում այնպիսի տարրեր, ինչպիսիք են ռիթմը, տեմպը, հարմոնիան, սիմետրիան:

### Բարոյական դաստիարակություն

Բարոյական դաստիարակությունը նպատակասլաց գործընթաց է և կարևոր է, թե որքան ակտիվ է հենց երեխայի մասնակցությունը այդ գործընթացին: Բարոյականությունը արտահայտվում է բարոյական պահանջների հիմնավորման և իրագործման եղանակների մեջ: Բարոյական դաստիարակության կարևորագույն խնդիրը անձի ակտիվ կենսադիրքի մշակումն է, գիտակցական վերաբերմունքի խոսքի և գործի միասնության մեջ՝ որպես բարքի ամենօրյա նորմա:

Խնդիրներն են՝

1. բարոյական գիտակցության ձևավորում
2. բարոյական զգացմունքների, վարքագծի ձևավորում
3. հայրենասիրություն, հումանիզմի, կոլեկտիվի ձևավորում
4. դեպի աշխատանքը վերաբերմունքի ձևավորում
5. գիտակցական կարգապահության ձևավորում

Բարոյական դաստիարակությունը իրականացվում է անձնավորության կենսագործունեության ամբողջ ընթացքում: Կարևոր դեր է խաղում լուսավորումը, որը կատարվում է բարոյական լեկցիաների, զրույցների, վիճաբանությունների, թեմատիկ երեկոների, հանդիպումների միջոցով: Հաշվի է առնվում երեխաների անհատական, հասակային առանձնահատկությունները, անհատական, բարոյական փորձը, բարոյական նորմաները ճանաչելու աստիճանը

## Ֆիզիկական դաստիարակություն

Ֆիզիկական դաստիարակությունը բնակչության առողջության ամրապնդմանը, աշխատունակության բարձրացմանը և երկարակեցությանը, ֆիզիկապես կոփված և բարոյապես կայուն սերնդի ձևավորմանն ուղղված կազմակերպված գործընթաց է: Ֆիզիկական դաստիարակության դերն է ապահովել հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության կազմավորումը:

Ֆիզիկական դաստիարակության առանցքը <<առողջ հոգին առողջ մարմնում>> դրույթն է, իսկ դրա գրավականներն են՝ զբոսանքները, շրջագայությունները, ֆիզիկական աշխատանքը, մարզումը, վարժություններն ու խաղերը:

## Աշխատանքային դաստիարակություն

Աշխատանքային դաստիարակությունը բազմակողմանի գործընթաց է՝ ուղղված երեխայի մոտ աշխատանքի նկատմամբ հայացքներ, գաղափարներ, աշխատասիրություն դաստիարակելուն, աշխատանքային կարողություններ և հմտություններ ձևավորելուն և զարգացնելուն: Աշխատանքային դաստիարակության խնդիրներն են երեխայի մոտ աշխատանքի նկատմամբ բարեխիղճ վերաբերմունքի, նյութական արժեքների պահպանման, աշխատելու պահանջ և ձգտում ունենալու դաստիարակումը: Երեխաների մոտ աշխատասիրություն ձևավորելու գործընթացի վրա ազդում են մի շարք գործոններ, որոնք են մեծերի օրինակը, զրույցները, մասնակցությունը տարբեր միջոցառումների:

## Էկոլոգիական դաստիարակություն

Էկոլոգիական դաստիարակությունը էկոլոգիական կուլտուրայի հիմքն ու անբաժանելի մասն է, շրջակա միջավայրի նկատմամբ բարոյագիտակցական վերաբերմունքի մակարդակի բարձրացմանը նպատակաուղղված, անընդմեջ, համակարգված գործընթաց, որը հնարավորություն է տալիս ձեռք բերել գիտելիքներ և կարողություններ, ձևավորել հմտություններ և բացահայտել ունակություններ, դրսևորել բարոյական չափանիշներ և վարքագիծ բնության հետ փոխներգործության ընթացքում:

## Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Ռազմահայրենասիրական դաստիարակությունը բազմաշերտ, նպատակաուղղված, անընդմեջ, համակարգված գործընթաց է՝ ուղղված մատաղ սերնդի հայրենասիրական, քաղաքացիական պարտքի, հայրենիքին նվիրվածության և հավատարմության դաստիարակմանը: